ՅՈՒՅԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Եթէ զծածկեալսն երևեցուցանիցես. լոյս ես.
Եթէ զօգտակարն իմ ծանուցանիցես. բարի ես.
Եթէ զրիծսն անտես առնիցես. երկայնամիտ ես.
Եթէ ընդ փոքուս ի դատ ոչ մտանիցես. բարձրեալ ես.
Եթէ ծառայիս ձեռն մատուցես. ստացող ես.
Եթէ աջովդ քո պաշտպանեսցես. յանձանձիչ ես.
Եթէ վհատելոյս դարման մատուցես. կերակրիչ ես.
Եթէ զանգետս պարարեսցես. վարդապետ ես.
Եթէ զդիմեալս առ քեզ ընկալցես. ապաւէն ես:

Թ. 155բ.—Դու սկիզբն. և պատճառ բարեաց ամենայնի.

Ոչ ես դատապարտիչ. այլ ազատիչ.
Ոչ ես կորուսիչ. այլ գտիչ.
Ոչ ես մահացուցիչ. այլ կեցուցիչ.
Ոչ ես տարագրիչ. այլ ժողովիչ.
Ոչ ես մատնիչ. այլ ապրեցուցիչ.
Ոչ ես ընկղմիչ. այլ վերածիչ.
Ոչ ես գլորիչ. այլ կանգնիչ.
Ոչ ես անիծիչ. այլ օրհնիչ.
Ոչ ես վրիժառու. այլ շնորհիչ.
Ոչ ես թշուառացուցիչ. այլ մխիթարիչ.
Ոչ եղծանես. այլ գրես.
Ոչ սասանես. այլ հաստատես.
Ոչ ոտն հարկանես. այլ սփոփես.
Ոչ պատճառս յօդես մահու. այլ ճառս խնդրես կենաց.
Ոչ ես ի կամս շարժեալս սատակման. այլ ի փրկութիւն ողորմութեան:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 56բ.—(Մի խաչի չորս թևերին գրված է) ո. կ. վ. ա. (փոքրատառ), (իսկ խաչի ներքևում) Յ. Փ. Մ. (մեծատառ): (Հավանաբար այս վերջինը գրչի անվան սկզբնատառերն են):

Թ. 119բ—(Նույնը կրկնվում է այս էջում) ո. կ. վ. ա.—Յ. Փ. Մ. (իսկ ներքևում) Վրթանէս:

Թ. 123ա.—Վախճան վերջնոյ մասին ճարտասանութեան: Եւ այսոքիկ սակաւք համառօտապէս շարա(թ. 123բ)դրեցեալք, բաւականք լիցին յաղագս ճարտասանական արհեստին ի փառս Յիսուսի և ի պատիւ ծնողի իւրոյ ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու:

Թ. 126ա.—Վերջ:

№ 343
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 276:—**Պրակները՝** 30, յուրաքանչյուրը 12-ական թերթից: . Պակասում են Ա, ԻԴ և ԻԵ պրակներն ամբողջությամբ: Թերի են հետևյալ պրակները՝ Բ և Ե՝ 6, Գ՝ 8, Ժ, ԺԹ, Ի, ԻԱ, և Լ՝ 9, Զ, Է, ԺԱ և ԻԹ՝ 10, Դ, Ը, Թ, ԺԴ, ԺԷ, ԻԲ, ԻԳ, ԻԷ և ԻԸ՝ 11 թերթից են: Որով վեց պրակ միայն ամբողջական են մնացել (ԺԲ, ԺԳ, ԺԵ, ԺԶ, ԺԸ և ԻԶ):—**Մեծությունը՝** 13,7×9×5,3 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ առջևի մասը, իսկ վերջի մասը՝ կաշեպատ տախտակ: Կաշվի վրա ճնշումով զարդեր են նկարված երկու երեսին: Կաշվի մեկ մասը պատռված է:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, ցեցակեր և մեծապես թերի: Պակասում են երեք ամբողջական պրակներ և բազմաթիվ թերթեր:— **Գրությունը՝** միապուն: **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 23—24:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր, ապայն ամբողջ շարակնոցը գրված է հայկական հին խազերով:— **Զարդագրություն՝** մատյանում կան հինգ գլխազարդեր (25բ, 61բ, 124ա, 166ա և 233բ), ինչպես նաև միջին որակի բազմաթիվ զարդագրեր, թոչնագրեր, լուսանցազարդեր, գմբեթներ, զարդեր, ծաղիկներ, թոչուններ և խաչեր:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** Ձեռագրատունս 1962 թ. նոյեմբերի 18-ին սույն ձեռագիրը նվեր է ստացել Կիպրոսից հայրենադարձ Գեորգ Դ. Սավուլյանից:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից և Գ-ից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 25ա.— ... թող և ինձ ըզպարտըս մեղուցեալ քո ծառային աղ. մեղալ տէր, մեղա[յ] Մանասէի ծայնիւ գոչեմ. ընկալ զիս մարդասէր ընդերեան ելեացն որոց թողան և ծածկեցան յանցանքն աղաչեմ:

Թ. 75բ.— Բրժըշկեա ըզմեզ Քրիստոս և շնորհեա մեզ արտասուս ապաշխարութեան:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 165բ.— Կա չորս տող, որ սրբված է ներկայիս և անընթեռնելի է:

Ձեռագրում գտնվում է Մայր Աթոռի № 3293 ստացագիրը (18 նոյեմբերի 1962 թ.), որից պարզվում է, որ մատյանը ճվիրել է նախկին կիպրահայ Գեորգ Դ. Սավուլյանը:

№ 344
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 335 (334+թ. 57ա):— **Պրակները՝** 28, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԻԸ՝ 6, Ա՝ 11, ԺԱ՝ 14, Դ՝ 16 թերթից են:— **Մեծությունը՝** 12,8×9,8×5,2 սմ:— **Նյութը՝** բարակ, մաքուր և դիմացկուն մագաղաթ:— **Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ճնշումով ոսկեգույն զարդեր կան:— **Պահպանակները՝** սկզբում 4, իսկ վերջում 12 հասարակ սպիտակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 10բ, 121բ, 164բ, 210բ, 333բ—334բ (մագաղաթ), ապա հետագայում ավելացված 133ա, 133բ, 165ա և 165բ (թուղթ):— **Տողերը՝** 22:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր, սակայն ամբողջ շարակնոցը գրված է հայկական հին խազերով:— **Զարդագրությունը՝** արժեքավոր այս ձեռագիրն ունի շատ գեղեցիկ մանրանկարչություն: Մատյանում կան ինը սիրուն գլխազարդեր (2ա, 11ա, 51բ, 98բ, 122ա, 211ա, 260ա, 279բ և 303բ), ինչպես նաև բազմաթիվ գեղեցիկ լուսանցազարդեր, թռչուններ, խաչեր, զարդեր, գմբեթներ, հրեշտակ (233բ) և կետ ձկան երախից դուրս եկող Հովնան մարգարեն (49բ): Ձեռագրում կան նաև շատ գեղեցիկ բազմաթիվ թռչնագրեր, զարդագրեր, գազանագրեր, վիշապագրեր, միացյալ թռչնագիր-ձկնագրեր, ինչպես նաև մեկական ձկնագիր (181ա) և միացյալ թռչնագիր-օձագիր (180ա):— **Գրիչն և ծաղկողը՝** Ալեքսիանոս քահանա:— **Պատվիրատուն՝** Սարգիս աբեղա, Մասրևան գյուղից:— **Ժամանակը՝** 1651—3 թթ.:— **Վայրը՝** Ս. Քրիստափոր տաճար:— **Ծանոթություն՝** այս թանկարժեք ձեռագիրը նվեր է ստացված 1972 թ. սեպտեմբերի 28-ին լոնդոնաբնակ Արթին Գալայճյանի կողմից·

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 51ա.—Զմեղապարտ(և անիմաստ—ջնջված է հետագայում—Ն. Մ.)ս յիշել աղաչեմ ով մանկունք սուրբ Սիոնի:

Թ. 100ա.— Զապիկարըս յիշել աղաչեմ և Դաւր յիշեալ լիջիք ի Քրիստոսէ:

Թ. 121ա.— Ոհ զհեռացեալս ի յարդարութենէ և զմոլորեալս ի ճշմարտութենէ:

Թ. 164ա.— Ով լուսամիտ մանկունք սուրբ Սիոնի. զբազմամեղ Ալեքսիանոս գծող սորա և ծաղկող քահանայ և ոչ ի գործոց. յիշեսջիր ի Քրիստոս և զծնաւղսն իմ:

Ստացող շարակնոցիս զպատուական սրբասնունդ զՍարգիս կրաւնաւորն յիշեսցջիր ի Քրիստոս. հանդերձ ծնօղաւքն իրովք ամէն:

Թ. 210ա.—Զստացող գրոցս զպատուական Սարգիս կրաւնորն. որ հաղալ արդեանցն իւր գնեաց զաս. յիշատակ իւր. և ծնօղաց իւրոց. և ամենայն ընդանեացն իւրոց. Աստուած բարի վայելումն տացէ. ամէն:

Թ. 259բ.— Զմեղաւոր Ալէքսիանոս ծրող սորա յիշեցէք ի Քրիստոս:

Թ. 303ա.—Քրիստոս Աստուած քո անարատ մաւր բարեխաւսութեամբն ողորմեա գծագրողի և ծաղկողի սորա Ալէքսիանոս երիցոյս. զհայրն իմ Ազարիայ քահանայն. և զմայրն իմ զԽանումն. և բոլորն իմ. որ հանգուցեալ են. բարերար և մարդասէր Աստուած. ողորմեա նոցայ: Գծագրեցի զսա հայոց թվին ՌԾ (1651 թ.—Ն. Մ.):

Թ. 332ա.— Փառք համագոյ, անբաժանելի և միասնական սուրբ երրորդութեանն և մի աստուածութեանն Հօր և որդոյ և սուրբ հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս ամէն: Արդ եղև աւարտ գըրչութեան այսմ մեծահանդէս և հոգեկից տառիս. ի շրջագայութեան հայկազեանս տօմարի Ռ-երրորդի հարիւրորորդի երկրորդի. ի հայրապետութիւն հայկազանս ազին Տեառն Տեառն Փիլիպոսի սրբազան կաթուղիկոսի. ի յաթոռ սուրբ Էջմիածնի Վաղարշապատու Այրարատեանն նահանգի: Եւ յառաջնորդութեան տանս Գողթն Տէր Խաչատուր արհեպիսկոպոսի: Գրեալ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ և փքծուն գրչի Ալէքսիանոս քահանայի, որ զանունս միայն ունիմ քահանայի և ոչ զգործս ի բարի, ի լաւ և ի լընտիր աւրինակէ Սրսոյ, առաջին վարժապետին և քաջ քարտուղարին Գրիգորի, մականուն Խուլ կոչեցեալոյ: Եւ ի դրան սուրբ և աստուածանկար և առաքելայարկ խորանիս և բրիստոսաբնակ սուրբ տաճարիս Քրիստափորի: Շնորհիւ ամէնազօրին Աստուծոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի յուսոյն մերոյ, ես Տէր Սարգիս կրօնաւոր ի Մասրևան գեղջէ, որ և անուամբ միայն հաբեղայ. ցանկացող եղէ այսմ աստուածային և երկնապարգև գանձիս և պատուական (թ. 332բ) և մաքուր մարգարտիս. ծաղկերանգ բուրաստանիս. որ ասի շարակնոց. տեղի շարեալ ականց զանազանից. քանզի որք զանազանարար ընկալան

զշնորհս հոգւոյն սրբոյ. զանազանապէս երգօղք եղեն ի բանս գովասանական և ի նուէրս մաղթանաց. առ ծնունդ բանին մարդացելոյ և ի տնօրինութիւն նորին և առ ամենայն սուրբս որ քեզ են հետևողք նմին. որ և միշտ երգի յեկեղեցիս Աստուծոյ ի սկզբանէ տարւոյն. մինչ ի կատարած նորին. ի փառս Աստուծոյ և սրբոց նորա: Որում մասնաւորեսցէ զամենայն հաւատացեալս յանուն նորա տէր մեր Յիսուս Քրիստոս որու: Արդ երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան զձեզ որ հանդիպիցիք այսմ գրոց և օգտիցիք յայսմանէ ընթեռնելով, և կամ օրինակելով, և կամ տեսութեամբ միայն յիշեսջիք ի Քրիստոս զծնողսն իմ զՆաւասարդն, և զՇաՀրի զմայրն իմ, և զեղբայրսն իմ զհանգուցեալսն ի Քրիստոս զՄիքայէլն, որ ի Վանատիկ քաղաքի ֆոանկաց փոխեցաւ ի Քրիստոս, և զՄէլքոնն, որ ի տարաժամ հասակի ել յաշխարհէս. որք և տրտմութիւն յոյժ թողին թշուառացեալ անձինս նաև զքոյրն իմ զՓարին: Եւ զեղբօր որդիսն իմ զԴանիէլն և զՄելքո(թ. 333ա)ն, և զամենայն արեան մերձաւորսն իմ. յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք. որպէս զի ողորմածն Աստուած ըստ մեծի ողորմութեան իւրում ողորմեսցի ձեզ. յիշողացդ և մեզ յիշեցելոցս ի միւս անգամ գալըստեանն և յաշխարհական ատենին. ամէն և եղիցի եղիցի:

Ով լուսամիտ մանկունք Սիովնի վասն որոյ յերեսս անկեալ մաղթեմ. որք լուսաւորիք սովաւ ուսմամբ կամ գաղափար առնելով. յիշեսջիք ի Քրիստոս. ամենայն արեան մերձաւորսն իմ. հանդերձ ծնաւղսն իմ ասելով ի խորոց սրտէ թէ տէր Աստուած ողորմեա նոցա և ջնջեա զձեռագիր յանցանաց նոցա. և գրեա զնոսա ի գիրն կենաց ամէն: Այլ և վասն խոշորութեան և անարհեստ գրոյս աղաչեմ անմեղադիր լինել և ծաղկոյս. զի և կար իմ այս էր. և ես անձամբս տկար գոլով քանզի յոյժ տատապանաւք և բազում նեղութեամբ գծագրեցի և ծաղկեցի զսայ. և ինքն որ առատն է ի տուրս բարեաց. տացէ ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս ի սմա. ստացողին և իւրոցն. և ինձ գծողիս և իմոցն ձեաւք հանդերձ զանսպառ բարիսն ժառանգեսցէ և զերկնից արքայութիւնն, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Նուէր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն հայոց Կաթողիկոսին.
Լօնտոնաբնակ Արթին Գալայճեանի կողմէ.
28 Սեպ. 1972 Երևան:

Թ. 334բ.— (Սկզբում այստեղ 14 տող գրություն է եղել, որ հետագայում սրբվել է և այժմ անընթեռնելի):

№ 345
ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թերթերը՝ 44:— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Զ պրակը, որ 4 թերթ է:— **Մեծությունը՝** 12,5×9,7×1,1 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ թուղթ: —**Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, պրակները քայքայված և անջատված են:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2ա:— **Տողերը՝** 18:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի շատ գեղեցիկ նկարներ, բազմաթիվ թոչնագրեր և երկու լուսանցազարդեր (3ա և 30ա): Մատյանում կան ամբողջական էջի ծավալով տասը սիրուն նկարներ, որոնք հետևյալներն են՝ Ներսես Շնորհալի (2բ), Մարիամը, Հիսուսն և Սիմեոն ծերունին (7բ), Աստվածածինն և Հիսուսը (12բ), Հիսուսի խաչելությունը (16բ), Հիսուսի մկրտությունը Հովհաննու Մկրտչի կողմից (19ա), Ստեփաննոս Նախավկան (22ա), Գրիգոր Լուսավորիչը (23բ), Սուրբ Գեորգը (25բ), Սուրբ Սարգիսը (27բ), Աստվածն և Հիսուսը (29բ): Բացի այդ ձեռագրում կան երկու սիրուն գլխազարդեր (3ա և 30ա):— **Գրիչը՝** Հովհաննես բահանա:— **Պատվիրատուն՝** Պետրոս:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1756 թ.:— **Վայրը՝** անհայտ, սակայն շատ հավանաբար Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** ձեռագիրը նվեր է ստացվել 1971 թ. ստամբուլաբնակ ազգային Պերճ Տողրամաճյանից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

«Ծառայս Աստուծոյ Պետրոսին» (պատվիրատուի անունը բազմաթիվ անգամ կրկնվում է ձեռագրում, ըստ որում մեկական անգամ հետևյալ էջերում՝ 11բ, 14ա, 18բ, 19ա, 21ա, 23ա, 26բ և 29ա, և երկուական անգամ՝ 15բ, 16ա, 18ա, 25ա, 26ա, 28բ, 43ա և 44ա էջերում):

Թ. 41բ.— Գրեց[աւ ...ձեռ]ամբ յեր... տէր Ովանէս[ին ...] Պալար օղլի խայ ... Տէր Յիսուս վայելել տ... ՌԲՇԵ-ին (1756 թ.—Ն. Մ.) զօրն Բ. շաբ[ա]տի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրում կա մի թղթակտոր, որի վրա գրված է)

Կ. Պոլսէն Պրն. Պերճ Տօղրամաճեան

1. Ս. Էջմիածնի թանգարանին կը նուիրէ մէկ փոքրիկ ձեռագիր հաւատով խոստովանիմ և աղօթքներ և սաղմոսներ:

2. Մէկ պղինձ պնակիկ «Ցշտկ. Կեսարիոյ Ս. Սարգիս եկեղեցւոյ ՌՄԾԴ» : 1254 + 551 = 1805:

№ 346
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 341:— **Պրակները՝** 29, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա, Բ և ԻԸ՝ 10, ԺԷ և ԻԹ՝ 11 և ԺԱ՝ 13 թերթից են:— **Մեծությունը՝** 13,4×9,1×5 սմ.:— **Նյութը՝** բարակ դիմացկուն մաքուր մագաղաթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նախշեր են նկարված: Ունի երկու

բռնիչներ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում երկուական թերթ մաղլագաթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 120ա, 121բ, 339բ—341բ:— **Տողերը՝** 23:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր, սակայն ամբողջ շարակնոցը գրված է հայկական հին խազերով:— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի շատ գեղեցիկ մանրանկարչություն, որտեղ օգտագործված է միայն որդան կարմիրը: Մատյանում կան երկու խորաններ (2ա և 121ա) և ութ գլխազարդեր (10ա, 50ա, 95ա, 165ա, 208բ, 260ա, 280բ և 305բ): Բացի այդ ձեռագրում կան բազմաթիվ թոչնագրեր և զարդագրեր, ինչպես նաև մեկ հատ միացյալ թոչնագիր-օձագիր (11բ): Մատյանում կան նաև բազմաթիվ լուսանցազարդեր, թոչուններ, գմբեթներ, ծաղիկներ, խաչեր և զարդեր, ինչպես նաև մեկ հատ հրեշտակ (231բ):— **Գրիչը՝** Ղուկաս բահանա:— **Պատվիրատուն՝** Մինաս աբեղա (Աճառեան երկրի Խոտանան գյուղից):— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1655 թ.:— **Վայրը՝** Որոտան երկրի Մըրուց գյուղի ս. Աստվածածին եկեղեցի:— **Մանոթություն՝** սույն շատ արժեքավոր ձեռագիրն ստացվել է նվեր բարեպաշտ մի ազգայինից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 119բ.— Յիշատակ է շարակնոցս Խոտանանցի Տէր Մինասին, հօրն Լալին, մօրն Պահալուին, եղբօրն Տէր Յովանիսին, Սարգիսին, Անդրէասին, որ նոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս, քորքն Մախմուրն և Ֆարին, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Թ. 259 բ.— Զատացող շարակնոցիս զՄինաս վատահամբաւ աբեղաս աղաչեմ յիշել ի Տէր զհայրն իմ Լալէն, մայրն իմ Պահալուն:

Թ. 337ա.— Գրեցաւ շարակնոցս ձեռամբ անարժան Ղուկաս Իրիցու ի յերկիրն Որոտան, ի շէնս որ կոչի Մըրուց, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին: Գրեցաւ թվին ՌԺԴ (1655 թ.—Ն. Մ.): Ով որ հանդիպիք սմա և Աստուած ողորմի ասէք ամէն:

Թ. 339ա.— Ես Մինաս քանքարակորուս աբեղաս. ստացա զշարակնոցս հալալ աշխատանաց իմոց և վաստակոց, յիշատակ ինձ և ծնողացն իմոց, հօրն իմոյ Լալին, մօրն իմոյ Պահալուին, և եղբարցն իմոց Տէր Յովանիսին, Սարգիսին և Անդրէասին որ նոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս, բոյրքն իմ զՄախմուրն և զՖարին և զհանգուցեալ բոյրն իմ զՄարգարիտն, որո[ւ] յիշատակն աւրհնութեամբ եղիցի: Ի յերկիրս Աճառան, ի գեղս որ կոչի Խոտանան, թուին ՌԾ և ինն երորդի (1660 թ. —Ն. Մ.):

№ 347
ՀՄԱՑԻԼ

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 1058,0×11,2 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հատ թուղթ:— **Կազմը՝** առանձին կաշյա պատյան:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի միջին որակի բազմաթիվ նկարներ սրբերի կյանքից: Կան երկուական գլխազարդեր ու թրուչուններ, մեկ թոչնագիր ու չորս զարդագիր: Հմայիլի սկզբում կան վեց հատ զանազան նկարներ (ընդամենը 127 սմ երկարությամբ) տերունական կյանքի դրվագներից, այսպես Մարիամի մկրտությունը, տեսարան դրախտից, Ավետումը, Հիսուսի ծնունդն և մկրտությունը և այլն: Սրանցից բացի շարունակության մեջ տեքստում կան հետևյալ 11 նկարները՝ Հիսուսի խաչելությունը, Աստվածածինն և Հիսուսը, Հովհաննես Մկրտիչը, Գրիգոր Նարեկացին, Տրդատ թագավորի մկրտությունը Գրիգոր Լուսավորչի կողմից (21×9 սմ. ծավալով), Հիսուսի 12 առաքյալները (57×9 սմ. ծավալով), Աբրահամ զոհում է իր որդուն, Գաբրիել հրեշտակապետը, ս. Գևորգը, ս. Սարգիսն և հրեշտակը:— **Գրիչն և ծաղկողը՝** Կաֆացի Արությունն, որդին Ազարևա բահանայի:— **Պատվիրատուն՝** Օվակիմի որդին Միրզա:— **Ժամանակը՝** 1777 թ.:— **Վայրը՝** Կաֆա:— **Մանոթությունն՝** հմայիլն ստացված է նվեր մի բարեպաշտ ազգայինից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Եւ ամենայն բանի աջմէ եկեալ ի ծառայս Աստուծոյ Օվակէմի որդի Մրզային:

... պահեա զծառայս քոյ Օվակէմի որդի Մոզային: Տուր զօրութիւն ծառայիս քո կեցս զորդիս: Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն զե.:

... պահեա զծառայս Մոզային:

... ի վերայ ծառայիս քո Մոզային:

... բարեխօս լեր քում ծառային Աստուծոյ Օվակէմի որդի Մոզային:

Ով սուրբ ընտէրանոս լեր բարէխօս ի Աստուծոյ քում ծառային պահեա ի չարէ ըզՄոզային:

Ի սրբոյն Գրիգորի մերոյ Նարեկացոյն ասացեալ վասն ծառայիս Աստուծոյ ի Մոզային ամէն:

... և բարեխօսեա քո ծառային և ես Մոզային կենացն առողջութեան:

Ով սուրբ հայր մեր Գրիգոր Լուսաւորիչ զխաւարս միտս լուսաւորեա ծառայ քո Մոզային:

Տէր Յիսուս բժշկեա Մոզային:

Սուրբ նշանի բարեխոսութեամբն պահեա զծառայ Մոզային:

... ի դէմ ծառայիս Աստուծոյ Մոզային:

... ուր այս անունքս յիշեն անզօր ոչ մերձենա ծառայս Մոզային:

... և այլ ամենայն սրբոց զօրավարացն բարեխոսութեամբն պահեա զծառայս Աստուծոյ Մոզային ամէն:

... պահեայ զծառայս Աստուծոյ Մոզային:

Ծառայս Աստուծոյ Մոզային:

Ծառայս Աստուծոյ Մոզային:

... Ոչ չարն իւր պահպանեսցէ,
Խորհուրդ բարին կատարեսցէ,
Ի խորին ծերութեան հասցէ,
Հայր մեղաւոր մեզ յիշեսցէ:

Եւ յետ այսմեսցս որ նա եղցէ արգայութեան ժառանգեսցէ: Ի քաղաքն Քաֆացի է ինքն որդի իրիցու է, մականուանմբ Արութիւն է և հայրն իմ զՏէր Ազարեան է: Խնդրեմք ի ենդէոնօքն զնոր հոգուն որոյ զհանգիստ ավիտենական բսպարգևեսցէ ամէն: Հայր մեր:

Գրեցաւ և նկարեցաւ պահպանութիւնս զատ և մաքուր պահեսցէ: Վաճառաց աջողութիւն, թշնամեաց ախտութիւն, թագաւորաց մեծամեծաց երես բախտութիւն և ամենայն բանի աջմէ եկեալ: Ես նս վասն աշխատութեամբ փոքր ինչ նկարեցաք այս վասն իւր տեսեալ զջեռմեռանդ սիրով խընդրեալն և մեք շնորհեցաք զայս ձեռն գրոյս Տէր Յիսուս բարի վայելումն տացէ զՕվակէմի որդի պարոն Մոզային, և եղև թվին ՌՄԻԶ-ին (1777 թ.— Ն. Մ.), ի քաղաքն Կաֆա: Խնդրեմ ի Տէր Յիսուսէ աշխարհիս խաղաղութիւն և թագաւորաց հաշտութիւն, ամէն: Պարգևեսցէ ամէն: Հայր մեր սուրբ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Սարգիս:
Մկրտիչի որդի Յիսուսի ծառայ Սարգիս:
Ծառասրս Սարգիսիս:
Ծառայ Սարգիսիս:
Յիսուսի ծառայ Սարգիս:
Մկրտիչի որդի Սարգիս:
Ծառայ է Սարգիսը (4 անգամ կրկնվում է):
Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ ամս. ծառայ, սուրբ Լուսաւորիչի ծառայ, սուրբ Կարապետի ծառայ, Մկրտիչի որդի Սարգիսին:

№ 348
ՀՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 651,0×8,2 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:— **Կազմը՝** ամբողջ հմայիլի կոնակում կրպցրված է սպիտակ շոր:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապուն:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** հմայիլն ունի մի քանի շատ հասարակ գունավոր և սև-սպիտակ նկարներ, սրբերի և հրեշտակների:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Վարդիսաթուն:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18—19-րդ դարեր:— **Վայրը՝** Ծովիրի քաղաք:— **Ծանոթություն՝** սույն հմայիլը նվեր է ստացված Կահիրեից՝ Մաեստրո Եդվարդ Հակոբյանից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

... նմայ զԱյիքսանոս պտուղ բարի և զտէր բժշկեցեր զվասն Եղիսէի մարգարէին յաղօթս ողջացուցեր նոյնպէս շնորհեայ զաւակն ծառայիս Աստուծոյ Վարդիսաթունին, այրընն Յարութին և զաւակաց, և լուր յաղաչանքս մերոց և կատարի ի բարի խնդրուածքս սոյնոյ և որպէս խոց ...

... որ ոչ մերձենայն ծառայիս Աստուծոյ Յարութին, իւր կողակիցին Վարդիսաթունին և իւրոց զաւակացքն ...:

... ծառայիս Աստուծոյ Վարդիսաթունին և զաւակաց...:

Ծառայիս Աստուծոյ Վարդիսաթունին:

... և ի ծառայիս Աստուծոյ Վարդիսաթունին և այրընն նորա Յարութին և իւրոյ զաւակացն ամէն:

(Հմայիլում բազմաթիվ անգամ կրկնվում են այս երկու անունները):

Եղիցի բժշկութիւն ծառայիս Աստուծոյ:

... ծառայիս Աստուծոյ Վարդիսաթունին իւր զաւակին:

... և պահէ պահպանեայ ծառայիս Աստուծոյ Վարդիսաթունին, իւր այր նորայ Յարութիւն և իւրոց զաւակացն ամէն:

... ի դէմ ծառայիս Աստուծոյ Վարդիսաթունին և իւր զաւակացն ...:

... գրեցաւ պ. Հէյմայլի այս պահպանութիւն ի քաղաքքն Ծօփրի և ի ձեռամբն ... մեղսասէր (ծառա)յիս ... աւարտեցայ ...:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Հմայիլի կոնակի ծայրի մասում գրված է)
Կը պատկանի Մ. Եդուարդ Յակոբեանի, Գահիրէ:

№ 349
ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թերթերը՝ 178 (176+101ա+101բ):— **Պրակները՝** 15, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա և ԺԵ պրակները, որոնք 11-ական թերթից են:— **Մեծությունը՝** 10×6,2×3,8 սմ.:— **Նյութը՝** կեղտոտած բարակ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, երկու բռնիչներն ընկել են և ինքը քայքայվել է:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 15:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** գրեթե չունի: Ցանց էջում կա տպագիր փոքրիկ մի նկար, որ ներկայացնում է Աստվածածինն ու Հիսուսը: Սրանից բացի փոքրիկ ձեռագրում կան թվով 19 հատ շատ հասարակ զարդագրեր, որոնք արժեքից զուրկ են:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ.— **Ժամանակը՝** 17-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** 1967 թ. սեպտեմբերի 28-ին ձեռագիրն ստացված է նվեր բարեպաշտ մի ազգայինից, ձեռամբ հոգ. տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 65բ.— Աստուածածին ամենօրհնեալ ըզպատանքս մեր ընկալ ի հանգստեան ժամուդ հա-

սեալ առ քեզ գոչեմ բժիժկ օրհնեալ արի ... արի ... աղջաց:

(Ձեռագրում կա մի փոքրիկ թղթակտոր, որի վրա գրված է)

Նարեկ վրդ. Շաքարյան,

28—9—67:

№ 350

ՀԱՄԱՑԻԼ

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 636,5×8,7 սմ.: —**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմը՝** հմայիլը զետեղված է հաստ ստվարաթղթից սարքած կլոր տուփի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** հմայիլն ունի հասարակ ոճով գունավոր բազմաթիվ նկարներ, որոնք առնված են Հիսուսի, առաքյալների, սրբերի և հրեշտակների կյանքից:— **Գրիչը՝** Կիրակոս Գրիգոր:— **Պատվիրատուն՝** անհայտ: —**Մաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Մանոթություն՝** հմայիլն ստացված է նվեր բարեպաշտ մի ազգայինից:

ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Բազմաթիվ տեղեր գրված է այսպես)

Ծառայիս Աստուծոյ (պատվիրատուի անվան տեղը բաց է թողնված) ամէն:

Բժշկութիւն լիցի ծառայիս Աստուծոյ ... ամէն:

Աղօթք սրբոց առաքելոցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ վասն պահպանութեան ծառայիս Աստուծոյ:

... ի դիմաց ծառայիս Աստուծոյ ... ամէն:

... եղիցի բժշկութիւն և առողջութիւն ծառայիս Աստուծոյ ... ամէն:

Գրեցաւ Հէմայիլս պահպանութիւն քաղաքն Կոստանդիանանուպոլիս, ձեռամբն անիմաստ Կիրակոսիս Գրիգորիս, միով հայր մեղայով մի յիշեցէք և Դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ ...:

№ 351

ՀԱՄԱՑԻԼ

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 579×8,5 սմ.: — **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** հմայիլում կան մի քանի հասարակ զարդագրեր, ինչպես նաև հետևյալ նկարները՝ Հիսուսը, Ադամն ու Եվան դրախտում, Կենաց ծառը, Հիսուսն և երեք մոգերը, Ներսես Շնորհալին, Սիմեոն ծերունին, Մարիամն և Հիսուսը, Աստվածածինն և Հիսուսը, Հիսուսի խաչելությունը, ս. Ստեփաննոսը, Գրիգոր Լուսավորիչը, Իսահակի զենումը հոր կողմից, Գաբրիել հրեշտակապետը, 24 սրբեր և առաքյալներ, ս. Գեորգը, ս. Սարգիսը, հրեշտակն և սատանան:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Մարկոս:— **Մաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 28 ապրիլի 1674 թ.: — **Վայրը՝** անհայտ:— **Մանոթություն՝** հմայիլը նվեր է ստացված մի բարեպաշտ ազգայինից:

ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

... ծառայիս Աստուծոյ Մարկոսին:

... ծառայիս Աստուծոյ Մարկոսին. օգնական եղիցի և պահապան յամենայն չարէ պահեսցէ ամէն:

... ի դիմաց ծառայիս Աստուծոյ Մարկոսին. օգնական եղիցի և պահապան ամէն:

... պահեայ և փրկեա զծառայս Աստուծոյ Մարկոսին ամէն:

... ծառայիս Աստուծոյ Մարկոսին. օգնական եղիցի և պահապան յամենայն չարէ պահեսցէ ամէն:

... արժանաւոր աղօթիւքն ողորմեա Քրիստոս Աստուած ծառայիս Աստուծոյ Մարկոսին:

... ի դիմաց ծառայիս Աստուծոյ Մարկոսին. օգնական եղիցի և պահապան ամէն:

... ի ծառայն Աստուծոյ Մարկոսին:

... ընդդէմ ծառայիս Աստուծոյ Մարկոսին:

... ի դիմաց ծառայիս Աստուծոյ Մարկոսին օգնական եղիցի և պահապան յամենայն չարէ պահեսցէ ամէն:

(Նույն տարբերակներով կրկնվում է ևս յոթ անգամ):

Գրեցաւ Հէմայիլս ի թվին Հայոց ՌՃԻԳ (1674 թ. —Ն. Մ.) ապրիլի ԻԸ, ի վայելումն Մարկոսին: Աստուած բարով վայելել տացէ ամէն:

№ 352

ՀԱՄԱՑԻԼ

(Հայատառ տառկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 145,5×9 սմ.: —**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ հասարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միապույն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ, սակայն շատ հավանաբար Կոստանդնուպոլիս:— **Մանոթություն՝** ստացված է նվեր ամերիկահայ մի զբոսաշրջիկից: Վեհափառ Հայրապետը հմայիլը Ձեռագրատուն հանձնեց 1965 թ. հոկտեմբերի 8-ին:

№ 353

ՀԱՄԱՑԻԼ

Թերթերը՝ 2 կտոր:— **Մեծությունը՝** (316,7+47,5)=364,2×8,4 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղ-

տոտած հաստ թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** անբավարար։— **Գրությունը՝** միապուն։— **Դատարկ թղթեր՝** չունի։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** տիրացու Խաչատուր։— **Պատվիրատուն՝** Հաճի Անտոն (հմայիլի սկզբնական վիճակում ուրիշ անուն է գրված եղել, որ հետագայում ջնջված է ու Անտոն գրված ամենուրեք)։— **Ժամանակը՝** 4 մարտի 1720 թ.։— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս։— **Ծանոթություն՝** հմայիլը նվեր է ստացված մի բարեպաշտ ազգայինից։ Վերափառ Հայրապետն այն Զեռագրատուն հանձնեց 1972 թ. հուլիսի 15-ին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

... զծառայս քո Անտոն[ին]։

... եղիցի պահպանութիւն ծառայիս Աստուծոյ հաճի Անտոնին (նույն ձևով մի անգամ ևս)։

... ի դիմաց ծառայիս Աստուծոյ հաճի Անտոնին ամէն։

Եղիցի օգնական և պահապան ծառայիս Աստուծոյ ... (նախնական անունը սրբված է) ամէն։

Եղիցի պահպանութիւն ծառայիս Աստուծոյ ... ամէն (այսպես անունը սրբված է նաև յոթ տեղում ևս)։

... մանաւանդ ի ծառայէս Աստուծոյ հաճի Անտոնէն, որոյ վերայ կենա գիրս այս եղիցի պահպանութիւն նմա ամէն։

... մանաւանդ ի ծառայէս Աստուծոյ հաճի Անտոնէն օգնական եղիցի և պահապան յամենայն չարէ պահեսցէ՝ յերևելի և յաներևոյթ թշնամոյն ամէն։

Գրեցաւ պահպանական Հէմայիլս ի թվականիս Հայոց ՌՃԿԹ (1720 թ.—Ն. Մ.) և ի մարտի ամսոյ Դ, պատկերօրն ուրբաթ, ի մայրաքաղաքս Ստամպոլ ձեռամբ նոտար տիրացու Խաչատուրիս, ի վայելումն հաճի Անտոնին. Աստուած բարով վայելել տացէ. Ամէն։

Հայր մեր որ յերկինս սուրբ եղիցի անուն քո եկեսցէ...։

Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ, և թուեցին զամենայն ոսկերս իմ. նոքա հայեցան և տեսին զիս։ Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին։ Դու Տէր մի հեռի առներ զօգնութիւն քո յինէն. և Տէր յօգնել ինձ նայեաց։ ՌՃԿԹ (1720 թ.—Ն. Մ.) թվին ապրիլ ամսոյ ԺԵ. աւագ ուրբաթի օրն գրեցաւ այս Գ տուն սաղմոս։

Աստուծոյ ծառայ Անտոնի և իւր տունը և իւր որդոցն ամէն։

№ 354
ՇԱՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 180։— **Պրակները՝** 15, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի վերջին՝ ԺԵ պրակը, որ 11 թերթից է։—**Մեծությունը՝** 8,3×5,5×3,3 սմ.։— **Նյութը՝** մի քիչ դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ։— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված։ Երկու բռնիչներն ընկել և կորել են։— **Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** բավարար, սակայն մի քանի պրակներ (Գ, Դ, Է, Ը) անջատված են։— **Գրությունը՝** միապուն։— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 175ա—180բ։— **Տողերը՝** 14—15։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** նոտրգիր, սակայն ամբողջ ձեռագիրը գրված է հայկական հին խազերով։— **Զարդագրություն՝** ձեռագրում կան, թեպետև սակավաթիվ, բավականին գեղեցիկ թոչնագրեր և զարդագրեր, թոչուններ և լուսանցազարդեր։ Փոքրիկ մատյանն ունի ութ գեղեցիկ գլխազարդեր (2ա, 10բ, 16բ, 33ա, 67ա, 91ա, 112ա և 158ա)։ Օգտագործված են միայն կարմիր ու կապույտ գույները։—**Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր։— **Վայրը՝** անհայտ։— **Ծանոթություն՝** արժեքավոր ձեռագիրն ստացված է նվեր մի բարեպաշտ ազգայինից։ Վերափառ Հայրապետն այն հանձնեց Զեռագրատուն 1972 թ. հուլիսի 15-ին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Գիրք պաշտաման։

Chants et service religieux. Chants et service.

Թ. 176բ.— Պունա, մայու, նտինոշը, շիշար։

Թ. 180ա.— Վարդան բան ամէ գիտութեան, օվ փափաքի իմաստութեան, այն որ չունի հնազանդութիւն, նորայ անշահ է գիտութիւն, երկրորդ գնալն իմ Քիլիս, թվին ՌՃԾ և Ամն (1702 թ.— Ն. Մ.)։

№ 355
ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1։— **Մեծությունը՝** 146×38,5 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։— **Կազմ՝** չունի, սակայն փաթաթված է հղկված կլոր փայտի վրա։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** անբավարար, մինչև կեսը պատռված է երկու մասի։— **Գրությունը՝** միապուն։— **Տողերը՝** 96։— **Գծումները՝** ճնշումով։— **Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** կոնդակն ունի բավականին սիրուն մի գլխազարդ, որի չափերն են 31×25,8 սմ.։ Պատկերը ներկայացնում է կենտրոնում Հիսուսը (որ պատռված է) նստած գահին, աջին՝ հոսող մի աղբյուր, իսկ ձախին՝ մի սուրբ և մի գառնուկ։ Բացի այդ կա մի մեծ լուսանցազարդ (ծաղիկներ) և մի հատ էլ թոչնագիր (Ի տառը) շուրջ 17×11 սմ. մեծությամբ։— **Գրիչը՝** տիրացու Հարությունն Այթոպարմախյան։— **Պատվիրատուն՝** Մատթեոս վարդապետ։— **Ծաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 5 սեպտեմբերի 1839 թ.։—**Վայրը՝** Ս. Աղբերկա վանք։ —**Ծանոթություն՝** սույն կոնդակն ստացված է Հոգեվոր Ճեմարանի գրադարանից 19 սեպտեմբերի 1965 թ.։

(Շարունակելի)